

«Հայկական ժամանակ» օրաթերթի՝ ս. թ. մայիսի 12-ի համարում շարադրված «կարուսելային» գաղափարները հերթական անգամ հավակնում են հասարակության մոտ նոր թյուրընկալում առաջացնել: Նշվում է, թե

«... քվեաթերթիկի վրա պետք է տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիք լինի դրված: Սա պարտադիր է, որովհետև եթե քվեատուվի մեջ հայտնված քվեաթերթիկը կնիք չունենա՝ անվավեր կճանաչվի...»:

Նախ, քվեաթերթիկները 2007 թվականից ի վեր չեն կնքվում և միայն ստորագրվում են հանձնաժողովի 3 անդամների կողմից, այն էլ քվեարկության նախորդ օրը: Զվեարկությունն անցկացվում է քվեարկության ծրարների միջոցով, քվեաթերթիկը դրվում է ծրարի մեջ, և ծրարն է կնքվում: Ստիպված են ենթադրել, որ «գլուխգործոցի» հեղինակը երբևէ չի տեսել ընտրական օրենսգիրքը, 2007 թվականից հետո չի մասնակցել և ոչ մի քվեարկության, իսկ եթե մասնակցել էլ է, ապա նման մասնակցությունը բերել է քվեաթերթիկի անվավեր լինելուն: Հեղինակին առաջարկում են հարցի լուծման առավել դյուրին տարբերակ, քան ընտրական օրենսգրքի ընթերցումն է. դիտել ընտրողների իրազեկման համար պատրաստված անիմացիոն տեսահոլովակը, որը բացատրում է քվեարկության կարգը և կօգնի հողվածագրին խույս տալ կամայական վերլուծություններից:

Կարծում են, որ արձագանքելու համար հեղինակից չի պահանջվի ևս մեկ շաբաթ:

*Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական ընտրական հանձնաժողովի  
նախագահ Գ. Ազարյան*